ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.01-3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրենի պարտականությունները կատարող Ա. Խուրշուդյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 168 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը,ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) ունեցող թվով 2 ուսանողներին, որից՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող թվով 2 ուսանողների:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. «Սույն պայմանագրի գինը կազմում է 59 958 100 (հիսունինը միլիոն ինը հարյուր հիսունութ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, որից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 59 925 100 (հիսունինը միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 33 000 (երեսուներեք հազար) ՀՀ դրամը:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխտրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Ք.Գյումրի, Մանուշյան 4-րդ թաղ.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011005460	Հ/Հ 900218000777
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝ պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան (ստորագրություն)	_____ Ա. Խուրշուդյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ